



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՐՈՎ-ԱՇԽԱՏԱԺՈՐՈՎ

«Փոխակերպուող հայաշխարհ. գործընթացներ եւ իրողութիւններ»

14 Սեպտեմբեր 2026 թ.

ք. Երեւան, Տիգրան Մեծի 17

Գիտաժողովի կազմակերպիչներ՝

Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական
համալսարան (Հայաստան)
Հայկազեան համալսարան (Լիբանան)

Գիտաժողով–աշխատաժողովի ծրագիր

14 Սեպտեմբեր, 2026	
Ժամ	Գիտաժողովի բացում
09:00-09:30	Գիտաժողովի մասնակիցների գրանցում
09:30-10:00	Բացման խօսք՝ Խ. Աբովեանի անունան ԶՊՄՅ Համաշխարհային պատմության եւ նրա դասաւանդման ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր Խաչատուր Ստեփանեան Ողջոյնի խօսք՝ Խ. Աբովեանի անունան ԶՊՄՅ ռեկտոր, պ.գ.թ., դոցենտ Լիլիթ Մկրտչեան Հայկազեան համալսարանի նախագահ, վերապատուելի դոկտոր Փոլ Հայտոսթեան Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն, դոկտոր Անդրանիկ Տազեսեան Խ. Աբովեանի անունան ԶՊՄՅ Պատմութեան եւ հասարակագիտութեան ֆակուլտետի դեկան, պ. գ. թ., դոցենտ Էդգար Յովհաննիսեան
10:00-11:45	Ա. Նիստ՝ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ
	Նիստավար՝ Խաչատուր Ստեփանեան
10:00-10:45	Հրակ Փափազեան, «"Ո՛վ Է Հայը". հարցադրումին հետքերով»
10:45-11:30	Լիլիթ Մնացականեան, «Հոգեխոցը (trauma) եւ հայկական ինքնութեան որոշ դրսեւորումներ»
11:30-11:45	Քննարկում
11:45-12:00	Սուրճի ընդմիջում
12:00–13:45	Բ. Նիստ՝ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՓԻՒՆԶ
	Նիստավար՝ Անդրանիկ Տազեսեան
12:00-12:45	Աշոտ Ոսկանեան, «Պետութիւն – Սփիւռք՝ ճգնաժամ եւ հեռանկար»
12:45-13:30	Հրայր Պալեան, «Ազգ-պետութիւն, Սփիւռք, եւ հայերու բնաւ չկառուցած հաստատութենական ճարտարապետութիւնը»
13:30-14:00	Քննարկում

14:00–15:00	Ճաշի ընդմիջում
15:00-16:15	Գ. Նիստ՝ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ
	Նիստավար՝ Խաչատուր Ստեփանեան
15:00-15:45	Տիգրան Եկաւեան. «Իրական Հայաստան, ազգային պետութիւն եւ նորագոյն զարգացումներ»
15:45-16:15	Քննարկում
16:15–16:30	Սուրճի ընդմիջում
16:30–18:15	Դ. Նիստ՝ ՀԱՅԱՇԽԱՐՀ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ
	Նիստավար՝ Էդգար Յովհաննիսեան
16:30-17:15	Արմենակ Թոքմաջեան, «Փոքր երկիր, համաշխարհային ցանցեր. հայերը եւ համաշխարհայնացման տարակերպութիւնը (paradox)»
17:15-18:00	Արա Սայէդ, «Սփիւռքահայութեան փոխակերպումը համաշխարհայնացման եւ թուային արհեստագիտութիւններու հոլովոյթին մէջ»
18:00-18:15	Քննարկում
18:15–18:45	Գիտաժողովի արդիւնքների ամփոփում

ԵԿԱԼԵԱՆ ՏԻՂՐԱՆ

ԿԵԼՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Եկալեան Տիգրան, մամուլի ֆրանսահայ երիտասարդ, ծանօթ դեմք մըն է, քաղաքական խոհագրող, հետազոտող եւ ուսումնասիր Կովկասի, Միջին Արեւելքի եւ Արեւելքի քրիստոնեայ համայնքներու աշխրահագրաքաղաքականութեան: Ան միջազգային յարաբերութիւններ կը դասաւանդէ Schiller International Universityի Փարիզի բաժանմունքին մէջ եւ դոկտորականը կը պատրաստէ Université Lumière Lyon 2ի մէջ՝ «Հայկական սփիւռք-պետական կառավարում» նիւթով: Եկալեան մաս կը կազմէ Institut des Chrétiens d'Orient (ICO)ի հետազոտական խմբակին, անդամ է Conflits պարբերականի խմբագրակազմին եւ կը վարէ Orients Pluriels փոստքաթիւ:

Եկալեան հեղինակն է Minorités d'Orient les oubliés de l'Histoire (2019), Géopolitique de l'Arménie (Բ. հրատ. 2023) եւ Escales arméniennes (2025, վերջին 15 տարիներու հայկական սփիւռքի մասին իր յօդուածներու ընտրանին) հատորներուն:

ԶԵԿՈՅՑ

«Իրական Հայաստան, ազգային պետութիւն եւ նորագոյն զարգացումներ»

ԱՄՓՈՓՈՒՄ

2020ի Արցախեան պատերազմէն ետք եւ արցախահայութեան բռնազաղթէն ի վեր (Սեպտեմբեր 2023), Հայաստանի Հանրապետութիւնը մտած է իր պետականութիւնը արագօրէն վերասահմանելու հանգրուանի մը մէջ: Վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմէ առաջ բերուած «Իրական Հայաստան» գաղափարը, որ կը սահմանափակուի Հանրապետութեան միջազգայնօրէն ճանչցուած սահմաններով եւ որպէս քաղաքացիական, տարածքային ու «խաղաղութեան խաչմերուկ» հանդիսացող պետութիւն մը կ'ընկալուի, կը նշանակէ գիտակցուած խզում մը՝ անկախութենէն ի վեր պետական խօսույթին հիմքը

հանդիսացած համահայկական ու հայրենատիրացնող Հայրենիքի գաղափարախօսութենէն:

Այս զեկոյցը կը հարցադրէ թէ արդեօք այս վերադասաւորումը կ'արտօնէ՞ Հայաստանը տակաւին բնորոշել, դասական իմաստով, որպէս «ազգային պետութիւն», այսինքն՝ քաղաքական միաւոր մը, որ կը համապատասխանէ իր մարմնաւորած մշակութային-ազգագրական հանրութեան:

Մեկնելով սփիւռք-պետութիւն կառավարման յարաբերութիւններու վերլուծումէն, զեկոյցը կը պաշտպանէ այն տեսակետը, թէ Հայաստան այսօր կ'ապրի աճող խզում մը Պետութեան (ինքնիշխան, հետզհետէ գործնական ու արեւմտամետ տարածքային կառոյց) եւ պատմականօրէն կերտուած Ազգին (սփիւռքեան, անդրազգային ու հայրենատիրացնող երեւակայական հանրութիւն մը, զոր հեղինակը կը բնորոշէ իբրեւ հայկականութիւն, ֆրանսերէն՝ *arménisme*, Հանրապետութեան սահմանները գերազանցող գալաքսիական կառոյց մը) միջեւ:

Հեղինակը կը բանավիճի թէ նման կացութիւնը կը յառաջացնէ ժամանակագրական ու քաղաքական անհամաժամանակացում մը Երեւանի եւ Սփիւռքի միջեւ, որ կը սահմանափակէ վերջինիս ազդեցութիւնը՝ «ռազմավարական առաստաղի» մը ձեւով, մինչ Հայաստանի Հանրապետութեան օրինականութիւնը մասամբ պատանդ կը մնայ ազգային պատումի մը, որուն ան այլեւս ամբողջովին տէրը չէ:

Չեկուցումը կ'եզրակացնէ որ Հայաստանը թերեւս պետք է հասկցուի ոչ թէ որպէս աւարտուն ազգային պետութիւն, այլ որպէս իր պատմական Ազգը վերիմաստաւորելու, եւ թերեւս մասամբ անկէ հրաժարելու ընթացքի մէջ գտնուող պետութիւն մը:

Թոքմաճեան Արմենակ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Թոքմաճեան Արմենակ, հետազօտող է Պէյրոսի Քարնըկի Միջին Արեւելքի Կեդրոնին մէջ եւ ԱՊՐԻ Արմենիայի աւագ խմբագիր: Ան նաեւ Խաղաղութեան եւ հակամարտութիւններու ուսումնասիրութեան դոկտորական թեկնածու է Թամփերէի համալսարանին մէջ: Անոր հետազօտութիւնները կը կեդրոնանան Սուրիոյ եւ Միջին Արեւելքի հակամարտութիւններուն վրայ: Նախապէս աշխատած է International Crisis Groupի մէջ՝ իբրեւ Սուրիոյ հարցերով հետազօտող, եւ տարածաշրջանին մէջ կատարած է լայնածաւալ դաշտային հետազօտութիւն: Անոր աշխատանքները հրապարակուած են Carnegie Middle East Centerի, International Crisis Groupի, The Century Internationalի, The Middle East Journalի, Palgrave Macmillanի եւ Syria Studiesի կողմէ, ի թիւս այլ ակադեմական եւ քաղաքական վերլուծութեան հարթակներու: Անոր վերջին ուսումնասիրութիւնը՝ «Սուրիոյ պետական վերակառուցման մարտահրաւերը. սահմանամերձ ծայրամասերու վերամիաւորումը», լոյս տեսած է The Middle East Journalի մէջ՝ ապրիլ 2026ին:

ԶԵԿՈՅՑ

Փոքր երկիր, համաշխարհային ցանցեր. հայերը եւ համաշխարհայնացման տարակերպութիւնը (paradox)

ԱՍՓՈՓՈՒՄ

Հայաստանը ժողովրդագրական եւ տնտեսական սահմանափակ կշիռ ունի, սակայն աշխարհասփիւռ հայութիւնը երկրին կ'ապահովէ իր չափերուն անհամեմատ լայն կապեր եւ ցանցեր: Համաշխարհայնացումը աւելի եւս արժեւորած է այս ներուժը՝ դիւրացնելով մարդոց, դրամագլուխի, գիտելիքի եւ գաղափարներու շրջանառութիւնը: Անոր ամենացայտուն օրինակներէն մէկը Հայաստանի արհեստագիտական ոլորտն է, որ Սփիւռքի հետ կապերու, հայրենադարձութեան, օտարերկրեայ ներդրումներու եւ

միջազգային շուկաներում հասանելիության շնորհիվ երկիրը դարձուցած է այս բնագավառին մեջ տարածաշրջանի յառաջատարը:

Սակայն նույն գործընթացները իրենց հետևանքում լուրջ մարտահրավերներ կը բերեն: Մարդոց աելի ազատ տեղաշարժում ու համաշխարհային աշխատաշուկային բացուիլը կը խթանեն արտագաղթն ու մասնագիտական ներուժի արտահոսքը, մինչ սփիւռքահայ համայնքները կը դիմագրաւեն աստիճանական ծուլման եւ հայրենիքի հետ կապերու թուլացման վտանգը: Այս իմաստով, համաշխարհայնացումը Հայաստանի համար երկակի ազդեցութիւն ունի. ան մէկ կողմէ կ'ընդլայնէ երկրի կարելիութիւններն ու միջազգային կապերը, իսկ միւս կողմէ կը խորացնէ ժողովրդագրական մարտահրավերները եւ կը նուազեցնէ մարդկային այն ներուժը, որուն վրայ կը յենին Հայաստանն ու ընդհանրապէս հայութիւնը:

Մաացականեան Լիլիթ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Մաացականեան Լիլիթ, ժոկտորականը պաշտպանած է Լիոնի համալսարանի քլինիքական հոգեբանութեան բաժնին մէջ:

Աշխատում է որպէս կլինիկական հոգեբան Կրետէի միջհամայնքային հիւանդանոցի մանկական հոգեբուժութեան բաժանմունքում՝ իրականացնելով դեռահասների մօտ հոգեխոցի խնամքին ուղղուած իր նախագիծը:

Ներկայի իր հետազոտութիւն-աշխատանքը կը ծաւալի «2015 Նոյեմբերի 13ի դէպքերի հոգեխոցի միջսերնդային փոխանցումը» թեմային շուրջ՝ իբրեւ Զաննի համալսարանի ջղահոգեբանութեան բաժնի յառաջադրանք:

Ունի է հետազոտութիւններ Հայոց Ցեղասպանութեան հոգեխոցի միջսերնդային փոխանցման, Հայաստանի հայերի՝ դէպի Ֆրանսա կատարած գաղթի հոգեկան հոգեխոցի փորձառութեան, ինչպէս նաեւ Եւրոպա արտագաղթած հայաստանցիների մօտ Հայաստանի պետութեան մասին պատկերացումների վերաբերեալ:

ԶԵԿՈՅՑ

Հոգեխոցը (trauma) եւ հայկական ինքնութեան որոշ դրսեւորումներ

ԱՄՓՈՓՈՒՄ

Զեկոյցը կը բարձրաձայնէ վարկածներ՝ հայկական ինքնութեան մի շարք դրսեւորումների հոգեբանական բնոյթի վերաբերեալ: Մասնաւորապէս կենտրոնանում է ժամանակակից հայաստանեան ինքնութեան հոգեբանական այնպիսի նկարագիրների վրայ, որոնք յղում են հոգեխոցի հոգեբանական հետեւանքներին:

Հիմնուելով հոգեխոցի տեսութեան որոշ դրոյթների վրայ՝ ուսումնասիրութիւնը փորձում է ցոյց տալ հոգեխոցային իրադարձութիւնների ազդեցութիւնը ինքնութեան մի շարք կողմերի վրայ:

Հասարակական, տնտեսական, քաղաքական տեւական ճգնաժամերը, պատերազմները, միջազգային բարդ յարաբերութիւնները, գործելով որպէս ծանր հոգեխոցային փորձառութիւններ՝ հայաստանեան միջավայրում թողել են այնպիսի հետեւանքներ, որոնցում ուրուագծւում են ընդհանրութիւններ յետ-հոգեխոցային հոգեկան վիճակների հետ: Այդ ընդհանրութիւնները մատնանշւում են ինչպէս անհատի եւ իր ինքնութեան, մշակոյթի, պետական հաստատութիւնների միջեւ յարաբերութիւնների, այնպէս էլ ներհասարակական եւ այլ հասարակութիւնների հետ յարաբերութիւններում:

Ուսումնասիրութիւնը կը հաւաստէ որ նման հաւաքական հոգեխոցերի ապաքինման համար անհրաժեշտ են հաւաքական լուծումներ. պատմական փաստերի ճանաչում, ճշմարտութիւնը բարձրաձայնող խօսոյթներ, յիշատակի ծեսեր եւ յիշատակման համայնքային այլ իրադարձութիւններ: Հայաստանեան վերջին պատմական իրադարձութիւնները նկատի առնելով՝ կարող ենք ընդգծել նաեւ ՉԼՄների եւ անվտանգային հարցերում երկրի վարած քաղաքականութեան կարեւորութիւնը հոգեխոցի վերապրման համար:

Ոսկանեան Աշոտ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ոսկանեան Աշոտ, փիլիսոփայութեան դոկտոր է, դոցենտ: Դասախօսում է Հայաստանի Ամերիկեան համալսարանում: Աւելի քան յիսուն գիտական (հայերէն, ռուսերէն, գերմաներէն, անգլերէն եւ ֆրանսերէն) հրապարակումների հեղինակ է, որոնց թւում՝ Հասկացման անխուսափելիութիւնը. դրուագներ փիլիսոփայական հերմենեւտիկայի եւ կազմաքանդման պատմութիւնից (2015) եւ Չարենցի ժամանակը (ոգու մասին) (2017) մենագրութիւնները: 1993ին հիմնադրել է Հումանիտար հետազոտութիւնների հայկական կենտրոնը, որի նախագահն է մինչ այժմ: Կենտրոնի երեք տարեգրքերի՝ Ինքնութիւն (1995), Հայաստանը Եւրոպայի ճանապարհին. Ինքնութիւն - 2 (2005) եւ Հայաստան 2018 . իրողութիւններ եւ հեռանկարներ (երկհատոր՝ Ինքնութիւն 3 (1), 2019 եւ Ինքնութիւն 3(2), 2020), կազմողն է եւ գլխաւոր խմբագիրը: Փիլիսոփայութեան գծով քսան տեսադասախօսութիւններից բաղկացած դասընթացի հեղինակ է (ցուցադրուած է Boon.TV համացանցային հարթակում): 1990-95՝ եղել է առաջին անկախ խորհրդարանի՝ ՀՀ գերագոյն խորհրդի պատգամաւոր եւ մշտական յանձնաժողովի նախագահ: Յետագայում՝ ՀՀ ազգային ժողովի պատգամաւոր, ինչպէս նաեւ ՀՀ Սահմանադրական յանձնաժողովի անդամ եւ Ազգային Եկեղեցական ժողովի պատուիրակ: 1995-2002՝ ՀՀ դեսպանն էր մի շարք եւրոպական երկրներում, այդ թւում՝ Աւստրիայում եւ Գերմանիայում: Եղել է ՀՀ մշտական ներկայացուցիչը ԵԱՀԿում եւ ՄԱԿի Վիեննայում տեղակայուած կազմակերպութիւններում: 2002-17՝ մի շարք պաշտօններ է զբաղեցրել ՀՀ ԱԳՆում:

ՉԵԿՈՅՑ

Պետություն – Սփիւռք՝ ճգնաժամ եւ հեռանկար

ԱՄՓՈՓՈՒՄ

Խորհրդային Հայաստանը Սփիւռքի նկատմամբ վարել է համակարգուած քաղաքականութիւն, որի բաղկացուցիչներն էին կազմակերպուած ներգաղթը, սփիւռքահայութեան հետ յարաբերուելու յատուկ հաստատութենական խողովակի ստեղծումը, որը նաեւ խստիւ քաղաքական վերահսկողութեան գործառնոյթներ է իրականացրել: Այս փուլի կարեւոր յատկանիշերից են ընտրողական վերաբերմունքը սփիւռքեան կառոյցների՝ աւանդական կուսակցութիւնների, բարեգործական հիմնարկների նկատմամբ, ինչպէս նաեւ ազատ շփումների սահմանափակումը:

Երրորդ հանրապետութեան հաստատումից իվեր սփիւռքահայերի ելումուտը հայրենիք թէւ ազատականացուել է, յարաբերութիւնները շարունակել են հակասական մնալ: Հակասութիւնները երեւան են եկել արդէն Ղարաբաղեան շարժման առաջին փուլում եւ յետագայում դրսեւորուել են ոչ միայն գաղափարական, այլեւ հաստատութենական մակարդակով (Սփիւռքի հետ կապի հիմնարկային կառոյցի կերպափոխումներ, վերաբերմունք երկքաղաքացիութեան խնդրին, քուէարկութեան իրաւունքի կարգաւորումներ եւն):

Հակասութիւնները ճգնաժամային նկարագիր են ձեռք բերել 2018ի յեղափոխութիւնից յետոյ՝ կապուած իշխանութիւնների՝ ազգային ինքնութեան աւանդական մոդելի արմատական կերպափոխման ծրագրի հետ, որը մերժել է Սփիւռքի հիմնարկութիւնների մեծ մասը: Ճգնաժամը դրսեւորուել է նաեւ նոր հաստատութենական որոշումների մակարդակով: ՀՀ իշխանութիւնները չեն հրաժարուել Սփիւռքի հետ կառուցողական աշխատանքից, բայց դա անում են որոշակի նեղ, ընտրողական ծրագրի շրջանակներում:

Կերպափոխում է նաեւ Սփիւռքը՝ ինչպէս կառուցուածքային, այնպէս էլ ինքնառեֆլեքսիայի առումով: Դա են վկայում սփիւռքահայ գիտնականների վերջին տարիներին իրականացրած հետազոտութիւնները, նուիրուած Սփիւռքի նոր միտումներին եւ Հայաստանի հետ յարաբերութիւններին:

Անկասկած է, որ ճգնաժամի յաղթահարումը հնարաւոր կը լինի միայն այն դէպքում, եթէ դրանում շահագրգռուած լինեն երկու կողմերը: Իրական փոխըմբռնման հասնելու համար կը պահանջուի նպատակների համաձայնեցում եւ երկուստեք փոփոխուելու կամք:

Պալեան Զրայր

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Պալեան Զրայր, ղեկավար պաշտօններ վարած է ՄԱԿի մէջ՝ իբրեւ Ընդհանուր Զարտուղարի Բարձր Ներկայացուցիչի Գրասենեակի Տնօրէն՝ Փղոսկրեայ Ափի մէջ (2006-8), ԵԱՀԿ/ԺՅՄԻԳի մէջ՝ իբրեւ Ընտրութիւններու Ղեկավար (1998-2003), եւ հասարակական կազմակերպութիւններու մէջ, ներառեալ Զարթըր Կեդրոնը՝ իբրեւ Զակամարտութեան Լուծման Տնօրէն (2008-22) ու Ինթըրնէշնլ քրայսիս Կրուփի՝ իբրեւ անոր Պոսնիա-Յերցեկովինայի գրասենեակի տնօրէն (1996-98): 35ամեայ հասարակական ծառայութեան ասպարէզի մը ընթացքին, ան աշխատած է հակամարտութեանց լուծման, ընտրութիւններու ու մարդու իրաւունքներու վրայ՝ Պալքաններու, Արեւելեան Եւրոպայի, Կովկասի, Կեդրոնական Ասիոյ, Մերձաւոր Արեւելքի ու Ափրիկէի մէջ: Պալեան դասաւանդած է հակամարտութեան լուծում, բանակցութիւններ ու միջնորդութիւն՝ Էմըրի Զամալսարանի Իրաւաբանական Դպրոցին մէջ (2008-18): Վերջերս հրատարակած է *Anatomy of Peacemaking: Nagorno-Karabakh Conflict & Missed Opportunities* (2026, արեւելահայերէն թարգմանութիւն՝ Ապրիլ 2026):

ԶԵԿՈՅՑ

Ազգ-Պետութիւն, Սփիւռք, եւ Զայերու Բնաւ Զկառուցած Զաստատութենական Ճարտարապետութիւնը

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուսումնասիրութիւնը կը քննէ Զայաստան ազգ-պետութեան յարաբերութիւնը իր համաշխարհային սփիւռքին հետ 1915Էն մինչեւ 2025-26ի ներկայաստանեան քաղաքական ճգնաժամը: Զննարկումը այս յարաբերութիւնները կը դնէ չորս խզում-բեկումներու մէջ.-

1915-20՝ Ցեղասպանութեան եւ Զայաստանի խորհրդայնացման յաջորդող ցրում եւ սփռում,

1988-91՝ Ղարաբաղեան շարժումը և անկախութիւնը,
1991-2020՝ կաշկանդուած պետականակերտում եւ խաղաղութեան
ձախող բանակցութիւններ

2020-26՝ համախումբ ընդհատում, որ կ'ընդգրկէ Լեռնային
Ղարաբաղի պատերազմն ու ցեղային զտումը, Հայաստանի
թեքումը՝ Ռուսաստանի ապահովութենէ կախեալութեան եւ
փաստացի նմուշներ՝ ժողովրդավարական նահանջին:

Իւրաքանչիւր բեկում-խզումի համար, զեկոյցը կը մատնանշէ ոչ
միայն այն թէ ի՞նչ պատահեցաւ եւ այն դերերը, զորս պետութեան ու
Սփիւռքի դերակատարները ստանձնեցին, այլ նաեւ՝ թէ ի՞նչ
կարելիութիւն կար ուրիշ կերպ ընել կողմերէն մեկուն կամ միւսին
կողմէ: Այս քննարկումը կը կատարուի դէպքերու,
իրադարձութիւններու եւ իրավիճակներու կրկնութիւնը իբրեւ
ախտաճանաչման գործիք ցոյց տալով, քան թէ դէպքերը լոկ
հռետորաբանական իրողութիւն նկատելով:

Չեկոյցը ազգ-պետութեան եւ Սփիւռքի միջեւ խորհրդատու մարմնի
եւ համադրող գործիքակազմերուն բացակայութիւնը կը տեսնէ
իբրեւ կառուցային բաց՝ այս չորս խզում-բեկումներուն մէջ եւ ոչ թէ
որեւէ առանձին ռազմավարական սխալ դատողութիւնը: Չեկոյցը կը
հաւաստէ նաեւ թէ այս բացակայութիւնը կը զուգահիշի ներկայիս
մերժուող բարեկարգչական յաւակնութիւններուն, որոնք ամբողջ
դար մը կազմակերպեցին հայկական ինքնութիւնը:

Աւարտին, զեկոյցը կը ներկայացնէ երկու ուղիներ.- ա)
Շարունակուող հաստատութենական երկատում, բ) եւ կամ՝ յստակ,
երկկողմ մերձեցում՝ քաղաքային-հատատութենական
վերամշակուած ծրագրի մը շուրջ:

Հուսկ, զեկոյցը հարց կու տայ՝ հայաշխարհը կրնայ նման գոյատեւող
կառոյց մը յառաջացնել յաջորդ տազնապէս առա՞ջ թէ՞ ետք:

Սայել Արա

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Սայել Արա, ծնած է 1960ին, Զալեպ, Սուրիա: Դոկտորականը պաշտպանած է Լեհաստանի մէջ՝ 1993ին: Դասախօսական, գիտական եւ վարչական գործունեութիւն ծաւալած է Զալեպի պետական համալսարանի ուժանիւթի բաժնին մէջ, նշանակալի ներդրում ունենալով բաժնի զարգացման ու վերելքին: Իբրեւ հալեպահայ՝ գործուն մասնակցութիւն ունեցած է նաեւ ազգային, ուսումնակրթական եւ մշակութային կեանքին՝ բեղուն ներդրում բերելով տեղոյն հայ համայնքի կենսունակութեան:

2012էն իվեր փրոֆեսոր եւ գիտաշխատող է Լեհաստանի Վրոցլաւի ճարտարագիտական համալսարանի (Politechnika Wroclawska) կենսոլորտի բաժանմունքին մէջ: Զեղինակ է մասնագիտական եօթը գիրքերու եւ բազմաթիւ յօդուածներու, որոնք հրատարակուած են արաբերէն, անգլերէն եւ լեհերէն:

Գիտական գործունեութեան կողքին՝ սփիւռքահայ մամուլին մէջ պարբերաբար անդրադարձած է Սփիւռքի կեանքին եւ անոր առնչուող զանազան հարցերուն: Իր հրապարակագրական հետաքրքրութիւններուն առանցքը կը կազմեն սփիւռքագիտութիւնը, հայկական համայնքներու հիմնահարցերը, ինչպէս նաեւ ժամանակակից արհեստագիտութիւններու ազդեցութիւնը Սփիւռքի փոխակերպուող համայնքային կեանքին վրայ, Լեհաստանի հայ համայնքի ժամանակակից մարտահրաւերները, լեհահայոց պատմական ներկայութիւնն ու դարաւոր մշակութային ժառանգութիւնը:

Արժանացած է Լեհաստանի հանրապետութեան Նախագահի «Ճառայութեան արծաթեայ խաչ» շքանշանին՝ 2017ին, առ ի գնահատանք լեհահայ համայնքին իր գործօն մասնակցութեան եւ վաստակին: Սուրիոյ մէջ 2006ին առաջին անգամ փրոֆեսորի գիտական կոչում ստանալէ ետք, նոյն կոչումը 2021ին, ստացած է Լեհաստանի մէջ:

ՉԵԿՈՅՑ

Սփիւռքահայութեան

համաշխարհայնացման

ԵՆ

փոխակերպումը

թուային

արհեստագիտութիւններու հոլովոյթին մէջ

ԱՄՓՈՓՈՒՄ

Համաշխարհայնացումն ու առաջատար թուային արհեստագիտութիւնները 21րդ դարու սփիւռքին մէջ վերածեաւորած են ինքնութեան, լեզուի, մշակոյթի, կազմակերպութեան եւ ցանցային միջավայրի գործառնոյթներն ու փոխարաբերութիւնները՝ պայմանաւորելով սփիւռքահայութեան փոխակերպութեան նոր ընթացքներ, մարտահրաւերներ եւ հնարաւորութիւններ:

Չեկոյցը կը քննէ սփիւռքահայութեան այս փոխակերպութիւնը՝ կեդրոնանալով վերջին երեք տասնամեակներուն վրայ եւ համադրելով գիտական ուսումնասիրութիւններու արդիւնքները՝ անհատական, ընտանեկան, սերնդային եւ հաստատութեանական մակարդակներու փոխազդեցութեան դիտանկիւնէն:

Սփիւռքահայութեան վրայ այս երկու գործընթացներու համատեղ ազդեցութեան ամբողջական եւ համակարգուած վերլուծութիւնները տակաւին սահմանափակ են եւ փոքրաթիւ: Հայկական ինքնութեան պահպանման կամ տկարացման հարցին կողքին, զեկոյցին հիմնական խնդիրը նաեւ այն է, թէ ինչպէ՞ս կը փոխակերպուին հայկական շարունակականութեան պայմանները համաշխարհայնացած եւ թուայնացած արդի միջավայրին մէջ:

Վերլուծութիւնը ցոյց կու տայ, որ թուային միջոցներով հայկական բովանդակութեան հասանելիութիւնը ինքնըստինքեան չի կրնար ապահովել համայնքային մասնակցութիւն կամ մշակութային կենսունակութիւն, իսկ առցանց կապերու բազմացումը դեռեւս չի նշանակեր կազմակերպուած ինքնութեան շարունակականութիւնն ու անոր վերարտադրութիւնը խթանող համագործակցութիւն:

Չեկոյցը կը հաւաստէ որ հիմնական մարտահրաւերը համաշխարհայնացման եւ առաջատար թուային արհեստագիտութիւններու ստեղծած կարելիութիւնները վերածել

Է հայկականության կենսունակ եւ շարունակաբար վերարտադրուող կարողութեան:

Հոսկ, ուսումնասիրութիւնը կ'առաջադրէ ելքեր, զարգացման հեռանկարներ՝ թուայնացման արհեստագիտութիւններու ստեղծած կարելիութիւնները անհատական եւ համայնքային մասնակցութեան, կազմակերպուած համագործակցութեան, լեզուական կենսունակութեան, մշակութային ստեղծագործութեան եւ միջսերնդային փոխանցման կարողութեան վերածելու ուղղութեամբ:

Փափագեան Հրակ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Փափագեան Հրակ, մարդաբանութեան դասախօս Է University of Southern California-ի ժամանակակից հայագիտութեան Թրփանճեան ամբիոնին:

Դոկտորականը պաշտպանած է մարդաբանութեան մէջ, Օքսֆորտի համալսարանէն: Շրջան մը եղած է դասախօս՝ Հայաստանի Ամերիկեան համալսարանին մէջ, իսկ նախապէս՝ Հարաւային Բալիֆորնիոյ, Բալիֆորնիոյ Նահանգային եւ Ֆրեզկոյի համալսարաններուն մէջ եղած է այցելու եւ յետ-դոկտորական դասախօս:

Իր ազգագրական հետազօտութիւնը կ'առնչուի ժամանակակից Թուրքիոյ հայերու փորձառութեան: Ուսումնասիրած է քրսիտոնեայ թրքահայերու, իրենք զիրենք ալեւի կամ իսլամ դաւանող, Նախկին հայերու իսլամացած ժառանգորդներու, ինչպէս նաեւ Հայաստանի հանրապետութենէն պանդխտած հայերու հաւաքականութիւնները: Ան նման հետազօտութիւններ կատարած է Հայաստանի մէջ, ուսումնասիրելով Հայաստան բնակութիւն հաստատած թրքահայերու ինչպէս նաեւ հայաստանցի հայերու ընկալումներն ու կեցուածքները՝ Թուրքիոյ եւ թուրքերու հանդէպ՝ Լեռնային Ղարաբաղի 2020ի պատերազմէն ետք: Գիտահետազօտական հետաքրքրութիւններ կ'ընդգրկեն հաւաքականութիւններն ու անոնց սահմանները, կրօնական, Էթնիք եւ ցեղային ինքնութիւնները, գաղթն ու սփիւռքները, ցեղասպանութիւնը, հակամարտութիւնն ու քաղաքականութիւնը:

ՁԵԿՈՅՑ

«ՌՎ Է Հայը»: Հարցադրումին հետքերով

ԱՄՓՈՓՈՒՄ

«ՌՎ Է Հայը» հարցումը տրուած է յաճախ: Բարձրացուած է տարբեր ժամանակներու եւ վայրերու մէջ, նաեւ՝ տարբեր նպատակներով:

Այս զեկոյց-քննարկումը եւս լուսարձակի տակ կ'առնէ այդ հարցումը, բայց տարբեր առումով:

Չեկոյցը՝ «Հայ»-ու սահմանում մը չէ, որ կը փնտռէ կամ կ'առաջարկէ: «Ո՞վ է Հայը» հարցումին չէ, որ կը փորձէ պատասխանել: Այլ կը կեդրոնանայ այդ հարցումի գործողութեան, արարքին վրայ ինքնին: Ինչու՞ կը տրուի այս հարցումը, ի՞նչ ընկերային-փորձառական պայմաններ կը մղեն մարդիկ - յատկապէս իրենք զիրենք «Հայ» համարողներ - բարձրացնելու այդ հարցումը եւ պատասխաններ փնտռելու: Ինչի՞ կը յանգի այդ հարցադրումը՝ զայն բարձրացնողին մօտ եւ անկէ անդին:

Չեկոյցը այս հարցադրումին կը մօտենայ հեղինակին՝ Պոլսոյ մէջ, մարդաբանական դաշտային հետազօտութեան կատարած որոնումներուն ընդմէջէն, ուր «Ո՞վ է Հայը» հարցումը յատուկ թափ հաւաքած է 21րդ դարուն՝ բախելով իւրայատուկ այլազանութեան: Յատկապէս կրօնք, քաղաքացիութիւն, «հայրենիք», այստեղ ի յայտ կու գան որպէս տարբերակող, զանազանող, երբեմն բաժնող գծեր: Հայ-քրիստոնեայ, մահմետական հայ, թուրքիացի հայ, հայաստանցի հայ: Սփիւռքահա՞յ, թե՞ ոչ: Այս այլապէս խայտաբղետ պայմաններու մէջ, ի՞նչը կը մնայ «նոյնական»:

Մեկնելով այս թիրախային, տեղական, կեդրոնացեալ հարցերու քննարկումներէն, զեկոյցը կ'աւարտի աւելի լայն եւ ընդհանրական եզրակացութիւններով: